ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԵՆ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ. «FACEBOOK» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻ ԻՆԴԵՔՍ

DOI: 10.52174/2579-2989_2021_2_71

Ինստիտուցիոնալ հիմնախնդիրներով պայմանավորված՝ վերստին վերադառնում ենք վարքաբանների աշխարհ: Սակայն, մենք դա անում ենք ոչ թե ռացիոնալ ընտրության տեսությանը դեմ գնալով, այլ փորձելով հասկանալ, թե անհատական մակարդակի ռացիոնալությունն ինչպես է հասարակական մակարդակում հանգում փոխկապվածության գաղափարին:

Ռոբերտ Բեյթս

Հիմնաբառեր. *«Facebook» սոցիալական կապի ինդեքս, սոցիալական կապիտալ, միջազգային առևտուր*

Հասարակական կյանքի փաստացի իրողությունները, այդ թվում՝ տնտեսական իրավիճակը, մեծապես կախված են դրանք կազմող առանձին մասնիկների՝ մարդկանց բարդ ցանցում փոխադարձ կապերի ուղղություններից ու սերտությունից: Սոցիալական ցանցերի լայն տարածումը՝ տվյալների հսկայական շտեմարանների գեներացմամբ, ստեղծել է սոցիալական կապիտալի՝ որպես միջանձնային կապերի ու վստահության ուսումնասիրության մեծ հնարավորություն: Արդեն հայտնի վարկածների թեստավորման համար որպես այլընտրանք ծառայելուց բացի, այս տվյալները մարդկային վերափոխվող հարաբերությունների վերաբերյալ հետազոտությունների նոր ալիքի սկիզբ են դարձել, այդ թվում՝ որոշակի երկրների մակարդակում: Հոդվածագիրը փորձել է համանման վերլուծություն իրականացնել ՀՀ օրինակով՝ միջազգային ու մարզային մակարդակներում վերլուծելով բնակիչների սոցիալական ցանցային կապերի ուղղություններն ու վեր հանելով դրանք բացատրող պատճառահետևանքային կապերը:

Լիանա ԻՍԱՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2019 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ.-ից մինչ օրս համագործակցում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետ՝ որպես հետազոտական խմբերի անդամ: Մասնակցել է մի շարք մասնագիտական գիտաժողովների և դասընթացների:

ORCID - https://orcid.org/0000-0003-0091-645X

Թեև միջանձնային կապերի և տարաբնույթ տնտեսական ցուցանիշների միջև փոխկապվածությունն ապացուցող հարուստ գրականության առկայությանը, այս հարցում ամենատեսանելի առնչությունը, թերևս, միջազգային առևտրի և արտաքին սոցիալական կապերի միջև է: Ըստ էության, կան երկու հիմնական պատճառներ՝ ոչ ձևական առևտրային խոչընդոտներ և պայմանագրերի կատարում (contract enforcement), որոնցով պայմանավորված, սոցիալական ցանցերը կարող են ազդել միջազգային առևտրի ձևերի

վրա: Ջ. Ռոչն ու Վ. Թրինդեյդն էթնիկ չինացիների օրինակով ցույց տալով, որ էթնիկ ցանցերի առկայությունը դրական ազդեցություն ունի երկրների միջև առևտրի վրա, կատարում են հետևյալ հիմնական եզրակացությունները. նախ՝ էթնիկ չինական ցանցերի առկայությունը հեշտացնում է առևտուրը չինական ցանցեր ունեցող երկրների զույգերում (այնքան խիտ, որքան Հարավարևելյան Ասիայում է)՝ այդպիսի ցանցեր չունեցող աշխարհի համեմատ առևտուրն ավելացնելով մոտ 60%-ով: Երկրորդ՝ դա զգալիորեն դյուրացնում է առևտուրը տարբերակված ապրանքների վաճառքի համար կազմակերպված բորսաների համեմատ, ինչը հեղինակները մեկնաբանում են նրանով, որ էթնիկ չինական ցանցերը ոչ միայն բարելավում են պայմանագրերի կատարումը (սա տեղի է ունենում բոլոր կատեգորիաների ապրանքների համար), այլև ծառայում են որպես խողովակ տեղեկատվական հոսքերի համար, որոնք ավելի անհամաչափ են տարբերակված ապրանքների դեպքում: Երրորդ եզրակացությունն այն է, որ էթնիկ չինական ցանցերի առևտուրն ունի խթանող ազդեցություն՝ մասշտաբից տընտեսման էֆեկտ. երկու անձի էթնիկ չինացի լինելու հավանականության սահմանային ազդեցությունն առևտրի վրա նվազում է էթնիկ չինացի բնակչության թվաքանակի մեծ լինելու դեպքում[1]:

Իրենց հերթին, Մ. Բեյլին և համահեղինակները Facebook-ի ցանցային կապերի ինդեքսի տվյալների օգտագործմամբ ցույց են տալիս, որ երկու երկիր ավելի շատ են միմյանց հետ առևտուր անում, երբ ավելի սերտ սոցիալական կապեր ունեն, և երբ ընդհանուր կապերի կենտրոնը երկրների ավելի մեծ խումբ է: Արդյունքում, էապես նվազում է աշխարհագրական հեռավորության գնահատված ազդեցությունն առևտրի վրա, իսկ երկրի սահմանների ազդեցությունը՝ վերանում: Հեղինակները ցույց են տալիս, որ սոցիալական կապերն ավելացնում են առևտրի ծավալները՝ նվազեցնելով տեղեկատվության անհամաչափությունները, իսկ պայմանագրի կատարման ինչպես վստահության, այնպես էլ պաշտոնական կառուցակարգերի համար հանդես են գալիս որպես փոխարինողներ[2]:

Հետաքրքրական է, որ փոքր դրական կոռելյացիա (0,22) կարելի է տեսնել նաև ՀՀ սոցիալական կապի և նույն երկրների հետ փոխադարձ առևտրի ցուցանիշների միջև: Պատմականորեն՝ հայերն ունեցել են առևտրային ցանցերի ստեղծման հաջողված փորձեր, ինչպիսին էր, օրինակ, Նոր Ջուղայի վաճառականների առևտրային ցանցը: 1604-1605 թվականներին ավելի քան 250 հազար հայ աքսորվել է Պարսկաստանի խորքը: Վերաբնակվելով Նոր Ջուղայում՝ հայերը կարողացել են ստեղծել լայնատարած առևտրային ցանց, որը միավորել է աշխարհի տարբեր երկրների հայ համայնքները: Ցավոք, այս կացութաձևը, իր ողջ նորարարական բնույթով հանդերձ, գոյություն ունեցավ մոտ 150 տարի: Հայ վաճառականների համաշխարհային առևտրական ցանցը, որը կառուցված էր ընտանեկան-տոհմային սկզբունքով, մրցակցային պայքարում հնարավորություն չուներ դիմակայելու Արևմտյան Եվրոպայի նոր տնտեսական ինստիտուտներին: Բացի այդ, հորիզոնական ցանցերի հետ դիմակայության մեջ, որպես կանոն, հաղթում են իշխանության ուղղահայացները, ինչը ևս բացատրում է Նոր Ջուղայի վաճառականների ցանցի ճակատագիրը Սեֆյան կայսրությունում[3]:

Մեր օրերում ՀՀ արտաքին առևտրի գլխավոր հանգույցներն են Ռուսաստանը, Եվրոպան (Գերմանիա, Նիդեռլանդներ, Շվեյցարիա և այլն), ԱՄՆ-ը, Չինաստանը, որոնք նաև ՀՀ-ից արտահանման գլխավոր ուղղություններն են՝ Մերձավոր Արևելքի և Արևելյան Ասիայի մի շարք երկրների հետ միասին (Իրաք, ԱՄԷ, Իրան, Հնդկաստան): Միաժամանակ, սոցիալա-

[1] Chaney T., Networks in International Trade, The Oxford Handbook of the Economics of Networks, edited by Bramoullé Y., Galeotti A., Rogers B. W., 2016, DOI: 10.1093/oxfordhb/9780199948277.013.19, https://www.oxfordhandbooks.com/view/10.1093/oxfordhb/9780199948277.001.0001/oxfordhb-9780199948277-e-19

[2] Bailey M., Gupta A., Hillenbrand S., Kuchler Th., Richmond R. and Stroebel J., International trade and social connectedness, Retrieved April 3, 2020, https://www.nber.org/system/files/working_papers/w26960/w26960.pdf

[3] Տես Վարդանյան Ռ., Ալեքյան Ն., Ճամփաբաժանին. որոշումների ժամանակը, 2018, https://armenia2041.org/am/

կան կապվածության բարձր ցուցանիշով մի շարք երկրների դեպքում, այդ թվում՝ Լիբանան, Կիպրոս, Հունաստան, Մոլդովա, Լուքսեմբուրգ և այլն, ունենք առևտրի աշխուժացման չիրացված ներուժ: Նշենք, որ որոշ երկրների պարագայում էլ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան կամ Ֆրանսիան, հայկական մեծ համայնքի առկայության համեմատ առկա է սոցիալական կապակցվածության համեմատաբար ցածր ցուցանիշ, ինչը հատկապես կարևոր է հարաբերությունների ապագայի տեսանկյունից: Հետաքրքրական է նաև, որ ՀՀ որոշ մարզերի օգտատերեր առանձնահատուկ



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ «Facebook» սոցիալական կապի ինդեքսը և համաշխարհային ցանցի հանգույցները[4]

[4] Տվյալների աղբյուր՝ Facebook սոցիալական կապի ինդեքս, https://data.humdata.org/dataset/social-connectedness-index, Վարդանյան Ռ., Ալեքյան Ն., Ճամփաբաժանին. որոշումների ժամանակը, 2018, https://armenia2041.org/am/

բարձր աստիճանի սոցիալական կապվածություն ունեն որոշակի երկրների շրջանների հետ (օրինակ՝ Շիրակի մարզը՝ Ուկրաինայի Օդեսա, Արագածոտնի և Արմավիրի մարզերը՝ Ֆրանսիայի Ալսաս, Լոռու մարզը՝ Մոլդովայի Կահուլ շրջանի հետ և այլն) (գծապատկեր 1):

Սոցիալական կապի ինդեքսի տվյալների բաշխման վերլուծության արդյունքում ստանում ենք հետևյալ պատկերը. ցանցի խտությամբ (desnsity – չափվում է որպես սոցիալական կապի ինդեքսի 1000-ից մեծ արժեք ունեցող երկրների քանակի և բոլոր երկրների n-1 քանակի քանորդ) Հայաստանը զիջում է բոլոր հարևաններին (Իրանի համար տվյալներ առկա չեն), ընդ որում, ՀՀ-ն ունի նաև ստանդարտ շեղման ամենաբարձր գործակիցը հարաբերությունների ավելի բարձր համասեռությամբ հարևանների համեմատ՝ 185 երկրի շարքում զբաղեցնելով 159-րդ հորիզոնականը: Հետաքրքրական է, որ արտահանման տվյալներով ևս ցանցի խտությամբ Հայաստանը զիջում է հարևաններին, սակայն բևեռացման առումով՝ Ադրբեջանի համեմատ ունի ստանդարտ շեղման առավել ցածր գործակից:

Արտաքին սոցիալական կապվածության և արտահանման ցուցանիշների միջև բարձր կոռելյացիա նկատվում է ինչպես երկրների, այնպես էլ մարզային մակարդակում: Ավելին, նշված երկուսը ՀՀ-ի դեպքում կոռելացվում են նաև տնտեսության շարժիչ ուժի՝ արդյունաբերական արտադրանքի ծավալի հետ: Հարկ է նշել, որ, ըստ վերլուծության արդյունքների, ՀՀ վարչական շրջանների արտաքին կապի ինդեքսի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշների միջև առկա է չափավոր բարձր դրական կոռելյացիա (0,52): Ավելին, գրեթե նույն պատկերն է դիտվում Բելառուսի Հանրապետության, ինչպես նաև Վրաստանի Հանրապետության դեպքում՝ փոքր շեղումներով: Նկատենք, որ այդ շեղումները կարող են ունենալ որոշակի պատճառներ, ինչպես, օրինակ, Վրաստանի Սամցխե Ջավախեթի շրջանի դեպքում, որի սոցիալական կապվածության մակարդակը Հայաստանի Հանրապետության մարզերի հետ շատ բարձր է, քանի որ այստեղ շատ հայեր են ապրում: Հիմնական արդյունքն այստեղ ակնհայտ դրական փոխկապակցվածությունն է արտաքին սոցիալական կապի և համախառն տարածաշրջանային արտադրանքի ցուցանիշների միջև: Միաժամանակ, ուշադրություն դարձնենք այն փաստին, որ դիտարկվող 3 երկիրն էլ զարգացող են, մինչդեռ զարգացած երկրների առումով նույն կապը դիտարկելիս պատկերը բոլորովին այլ է[5] (գծապատկեր 2):

Մարզային մակարդակում ՀՀ ներքին



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Սոցիալական կապի ինդեքսի տվյալների բաշխումը ՀՀ-ում և հարևան երկրներում[6]

[5] Isayan L., Causations or payoffs? The interaction between countries' economic results and competing proxies of social capital, 2021 (draft, forthcoming).

[6] Պատրաստել է հեղինակն ըստ սոցիալական կապի ինդեքսի տվյալների:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ մարզերի միջին ներքին և միջին արտաքին սոցիալական կապի ինդեքսը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ու արտահանման և արդյունաբերության ծավալները[7]

ցանցային կապերն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ փոխադարձ կապվածությունը հիմնականում մեծ է հյուսիսային, ինչպես նաև հարավային մարզերի միջև՝ որոշ բացառություններով: Մասնավորապես՝ թեև մյուս բոլոր հյուսիսային մարզերի հետ ունեցած կապվածության բարձր մակարդակին, սոցիալական կապի ամենացածր ցուցանիշն առկա է Շիրակի ու Գեղարքունիքի և Տավուշի ու Շիրակի մարզերի միջև: Մայրաքաղաք Երևանի բնակիչները մարզերից ամենացածր աստիճանի սոցիալական կապվածություն ունեն Շիրակի բնակիչների հետ: Միջինում մյուս մարզերի բնակիչների հետ ամենաբարձր մակարդակի ցանցային կապեր ունեն Վայոց ձորի, իսկ ամենացածրը՝ Երևանի բնակիչները: Արտաքին աշխարհի հետ սոցիալական կապի ամենաբարձր ցուցանիշն առկա է Սյունիքի դեպքում, իսկ ամենացածրը՝ Շիրակի: Արձանագրենք, որ կապերի այսպիսի փաստացի տեսքի պատճառներն ու հետևանքներն կարիք ունեն մանրամասն սոցիալ-հոգեբանական վերլուծության, ինչը, գուցե, կարող է օգտակար լինել թուլացած կամրջող սոցիալական կապիտալով հետպատերազմական ՀՀ-ում համատեղ ապագայի ռազմավարություն մշակելիս (գծապատկեր 3):

Այսպիսով՝ ինչպես ամբողջ աշխարհում, ՀՀ-ի դեպքում նույնպես, միջազգային առևտրի տվյալները կոռելացվում են միջանձնային կապերի հետ: Սակայն, հարևանների համեմատ, արտաքին աշխարհի հետ ՀՀ «շփումը» պակաս համասեռ է՝ թե՛ սոցիալական կապի ինդեքսի, թե՛ արտաքին առևտրի ցուցանիշների տեսանկյունից: Միաժամանակ, սոցիալական կապ-

[7] Վիզուալիզացված է հեղինակի կողմից՝ օգտվելով հետևյալ աղբյուրներից՝ Armstat.am, data.humdata.org, transparency.am: ՀՆԱ մոտարկված ՀՏԱ ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է «Լոռու և Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը» (2018-19) դրամաշնորհային հետազոտության ծրագրի շրջանակներում:

վածության բարձր ցուցանիշով մի շարք երկրների դեպքում ՀՀ-ն ունի առևտրի աշխուժացման չիրացված ներուժ. կարելի է ենթադրել, որ անձնային փոխհարաբերությունները չեն վերածվում գործարար համագործակցության՝ նույնիսկ համեմատաբար բարձր միջին կենսամակարդակ ունեցող որոշ երկրների պարագայում: Մարզային մակարդակում բարձր դրական կոռելյացիա է նկատվում արտաքին սոցիալական կապվածության և մարզերի ՀՏԱ ցուցանիշների միջև, ինչը կարող է բացատրվել արդյունաբերական արտադրանքի ցուցանիշների նույնպիսի բաշխմամբ: Ինչ վերաբերում է միջմարզային կապերի սերտությանը, այստեղ հարաբերություններն առավել բարդ են, իսկ պատճառները՝ առավելապես սոցիալ-հոգեբանական բնույթի, որոնք հաճախ իրենց արտացոլումն են գտնում էթնոֆոլիզմների մեջ (օրինակ՝ «բիբար կրծող» - երևանցիներ, «քոլեցի» - լոռեցիներ, «Քռի ջուր խմած» - թիֆլիսեցիներ և այլն)՝ ունենալով առավել խոր վերլուծության կարիք:

Որպես ամփոփում՝ «Ճամփաբաժանին» գրքից մեջբերենք հետևյալ միտքը. «Պարադոքսն այն է, որ փոխզիջումների հանդեպ ազգային հակվածությունը միշտ ունեցել է արտաքին ուղղվածություն. հայերը կարողանում էին պայմանավորվել օտարների հետ՝ իրենց համար ապահովելով արտոնություններ և բացառիկ իրավունքներ, սակայն վիթխարի դժվարությունների առջև էին կանգնում միմյանց հետ համաձայնության հասնելու հարցում»[8]:

[8] Տես Վարդանյան Ռ., Ալեքյան Ն., Ճամփաբաժանին. որոշումների ժամանակը, 2018, https://armenia2041.org/am/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թրանսփերենսի ինթերնեշնլ, 2018 թ. խորհրդարանական արտահերթ ընտրությունների ընտրական թվերի էլեկտրոնային մոնիտորինգ, 2019, https://transparency.am/files/publications/1554992616-0-662945.pdf?v=4
2. Վարդանյան Ռ., Ալեքյան Ն., Ճամփաբաժանին. որոշումների Ժամանակը, 2018, https://armenia2041.org/am/
3. Bailey M., Cao R., Kuchler T., Stroebel J., Wong A. (2018b), Social Connectedness: Measurement, Determinants, and Effects, Journal of Economic Perspectives, Volume 32, N 3, pp 259–280, Retrieved April 3, 2020, https://pubs.aeaweb.org/doi/pdfplus/10.1257/jep.32.3.259
4. Bailey M., Gupta A., Hillenbrand S., Kuchler Th., Richmond R. and Stroebel J. (2020), International trade and social connectedness, Retrieved April 3, 2020, https://www.nber.org/system/files/working_papers/w26960/w26960.pdf
5. Chaney T., Networks in International Trade, The Oxford Handbook of the Economics of Networks, edited by Bramoullé Y., Galeotti A., Rogers B. W., 2016, DOI: 10.1093/oxfordhb/9780199948277.013.19, https://www.oxfordhandbooks.com/view/10.1093/oxfordhb/9780199948277.001.0001/oxfordhb-9780199948277-e-19
6. Isayan L., Causations or payoffs? The interaction between countries' economic results and competing proxies of social capital, 2021 (draft, forthcoming).
7. Niall Ferguson, The Square and the Tower: Networks, Hierarchies and the Struggle for Global Power, London: Allen Lane, 2017.

Лиана ИСАЯН
Аспирант, АГЭУ

ОБРАЗОВАНИЕ , ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

КАКОВЫ ВНУТРЕННИЕ И ВНЕШНИЕ СЕТЕВЫЕ СВЯЗИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ? ИНДЕКС СОЦИАЛЬНОЙ СВЯЗИ FACEBOOK

Реалии общественной жизни, в том числе экономическая ситуация, во многом зависят от направленности и близости отношений в сложной сети людей, составляющих общество. Появление и широкое использование социальных сетей с генерацией огромных баз данных создало прекрасную возможность для изучения социального капитала как межличностных отношений и доверия. Эти данные не только служат альтернативой проверке уже известных гипотез, но и вызвали новую волну исследований, касающихся изменения человеческих взаимоотношений, в том числе на уровне отдельных стран. В данной работе автор осуществил аналогичное наблюдение на примере Республики Армения, проанализировав направления социальных сетевых связей жителей Республики Армения на международном и региональном уровнях и выявив объясняющие их причинно-следственные связи.

Ключевые слова: *индекс социальной связи Facebook, социальный капитал, международная торговля*

Liana ISAYAN
PhD student, ASUE

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

HOW DO INTERNAL AND EXTERNAL NETWORK CONNECTIONS OF THE REPUBLIC OF ARMENIA LOOK? FACEBOOK SOCIAL CONNECTEDNESS INDEX

The actual realities of social life, including the economic situation, largely depend on the directions and closeness of relations in the complex network of people making up the society. The emergence and wide usage of social networks with the generation of huge databases has created a great opportunity to study social capital as interpersonal relationships and trust. In addition to serving as an alternative to testing already known hypotheses, these data have sparked a new wave of research into changing human relationships, including at the individual country level. In this work, the author has carried out the latter by the example of the Republic of Armenia, analyzing the directions of the social network connections of the people living in the Republic of Armenia at the international and regional levels and trying to reveal the causal connections explaining them.

Keywords: *Facebook social connectedness index, social capital, international trade*